

ՀԱԳՄՉ 07.31

Առաջին հրատարակություն
23-ը դեկտեմբերի 2003թ.
Ներառում է փոփոխություններ 1, 2 և 3-ը

Ականների վտանգի իրազեկմամբ զբաղվող կազմակերպությունների և գործողությունների հավաստարմագրում

Տնօրեն,
ՄԱԿ-ի Ականազերծման ծառայություն (ՄԱԿԱՄ),
2 United Nations Plaza, DC2-0650
New York, NY 10017
USA

Էլ. Փոստ՝ mineaction@un.org
Հեռախոս՝ (1 212) 963 1875
Ֆաքս՝ (1 212) 963 2498
Կայքէջ՝ www.mineactionstandards.org

Նախագրուշացում

Սույն փաստաթուղթն ուժի մեջ է մտել կազմի վրա նշված ամսաթվից: Քանի որ Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչները (ՀԱԳՄՉ) պարբերաբար վերանայվում և թարմացվում են, դրանից օգտվողները պետք է այցելեն ՀԱԳՄՉ ծրագրի կայքէջը վերջինիս կարգավիճակը ստուգելու նպատակով (<http://www.mineactionstandards.org/> կամ ՄԱԿԱԾ կայքէջ հետևյալ հասցեով՝ <http://www.mineaction.org>):

Հեղինակային իրավունք

ՄԱԿ-ի սույն փաստաթուղթը Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչ է (ՀԱԳՄՉ) և սեփականության իրավունքով պաշտպանված է ՄԱԿ-ի կողմից: Ոչ սույն փաստաթուղթը, ոչ էլ դրա որևէ հատված չի կարելի վերարտադրել, պահել կամ որևէ այլ միջոցով, կամ ձևով փոխանցել որևէ այլ նպատակի համար՝ առանց ՄԱԿ-ի անունից գործող ՄԱԿԱԾ-ի կողմից նախապես գրավոր համաձայնություն ձեռք բերելու:

Սույն փաստաթուղթը ենթակա չէ վաճառքի:

Տնօրեն
ՄԱԿ-ի Ականազերծման ծառայություն (ՄԱԿԱԾ)
2 United Nations Plaza, DC2-0650
Նյու Յորք, NY 10017
ԱՄՆ

Էլ-փոստ՝ mineaction@un.org
Հեռախոս՝ (1 212) 963 1875
Ֆաքս՝ (1 212) 963 2498

Բովանդակություն

Բովանդակություն	iii
Նախաբան	v
Ներածություն	vi
Ականների վտանգի իրազեկմամբ զբաղվող կազմակերպությունների և գործողությունների հավատարմագրում	1
1. Ծավալ.....	1
2. Փաստաթղթեր	1
3. Տերմիններ, սահմանումներ և հապավումներ	1
4. Հավատարմագրում	2
5. Ընդհանուր պահանջներ	3
5.1. Հիմնական նկատառումներ	3
5.2. Հավատարմագրման գործընթաց	4
5.2.1. Հավատարմագրման հայցադիմում	4
5.2.2. Հայցադիմումի «վերացական» (պայմանական) գնահատում	4
5.2.3. «Տեղային» (հենց տեղում) գնահատում	6
5.3. Հավատարմագրման երկարաձգում կամ ձևափոխում	7
5.3.1. Կառավարման համակարգի ձևափոխում կամ փոփոխություն	7
5.3.2. Գործառնական ընթացակարգերի ձևափոխում կամ փոփոխություն	7
5.3.3. Ականների վտանգի իրազեկման (ԱՎԻ) նախագծի փոփոխություններ	7
5.4. Մոնիտորինգ	8
5.5. Հավատարմագրման համաձայնագրերի կասեցում և դադարեցում	8
5.5.1. Կասեցում	8
5.5.2. Դադարեցում	8
6. Հավատարմագրման մարմին՝ ընդհանուր պարտավորություններ	9
6.1. Ընդհանուր դրույթներ	9
6.2. Անկախություն, անկողմնակալություն և անկեղծություն	9
6.3. Գաղտնիություն	10
6.4. Կազմակերպում և կառավարում	10
6.5. Կառավարման համակարգ	10
6.6. Անձնակազմ	10
6.7. Հավատարմագրման մեթոդներ և ընթացակարգեր	11
6.8. Արձանագրություններ	11
6.9. Բողոքարկումներ	11
7. Ուղղորդող սկզբունքներ	11
7.1. Շահառուների մասնակցություն/ներգրավում	11
7.2. Համակարգում	11
7.3. Ինտեգրում	12
7.4. Համայնքի մասնակցություն և իրավասություն	12
7.5. Տեղեկությունների կառավարում և փոխանակում	12
7.6. Համապատասխան հասցեականություն	12
7.7. Կրթում/Ուսուցում	12

7.8.	Վերապատրաստում	13
8.	Պարտավորություններ	13
8.1.	Միավորված ազգերի կազմակերպություն	13
8.2.	Ականազերծման գործողությունների հան ազգային մարմին (ԱԳԱՄ)	13
8.3.	Հավատարմագրման մարմին	13
8.4.	ԱՎԻ կազմակերպություն	14
8.5.	Դոնորներ.....	14
	Հավելված Ա (Նորմատիվ) Փաստաթղթեր.....	16
	Հավելված Բ (Տեղեկատվական) Տերմիններ, սահմանումներ և հապավումներ	17
	Հավելված Գ (Տեղեկատվական) Հավատարմագրման կառավարման գործընթացը	21
	Փոփոխությունների գրանցում	22

Նախաբան

Մարդասիրական հակաականային ծրագրերի միջազգային չափորոշիչները առաջին անգամ առաջարկվել են 1996թ. հուլիսին Դանիայում տեղի ունեցած միջազգային տեխնիկական գիտաժողովի աշխատանքային խմբերի կողմից: Չափորոշիչներ են սահմանվել ականազերծման բոլոր ասպեկտների համար, չափանիշեր են առաջարկվել և համաշխարհային նոր սահմանում է տրվել «ականազերծում» գաղափարին: 1996թ վերջում Դանիայում առաջարկված սկզբունքները զարգացվել են ՄԱԿ-ի կողմից անցկացվող ժողովի աշխատանքային խմբի կողմից և մշակվել են Մարդասիրական ականազերծման գործողությունների միջազգային չափանիշերը: Առաջին հրատարակությունը տպագրվել է ՄԱԿ-ի ականազերծման ծառայության (ՄԱԿԱԾ) կողմից 1997թ. մարտին:

Այս նախնական չափորոշիչների ծավալները այդ ժամանակից ի վեր ընդլայնվել են՝ ներառելու հակաականային գործողությունների այլ բաղադրիչներ և արտացոլելու գործողությունների, գործընթացների, գործելաձևերի և նորմերի հետ կապված փոփոխությունները: Չափորոշիչները վերամշակվեցին և վերանվանվեցին որպես Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչներ (ՀԱԳՄՉ), որի առաջին հրատարակությունը լույս տեսավ 2001թ. հոկտեմբերին:

ՄԱԿ-ն ընդհանուր պարտավորություններ ունի ականային ծրագրերի արդյունավետ կառավարումը խրախուսելու և կյանքի կոչելու համար, որը ներառում է չափորոշիչների մշակումն ու պահպանումը: Այդ պատճառով ՄԱԿԱԾ-ը ՄԱԿ-ում տեղակայված այն գրասենյակն է, որը պատասխանատու է ՀԱԳՄՉ-ի մշակման և պահպանման համար: ՀԱԳՄՉ ստեղծվում է Ժնևի Մարդասիրական ականազերծման միջազգային կենտրոնի աջակցությամբ:

ՀԱԳՄՉ-ն պատրաստելու, վերանայելու և վերափոխելու աշխատանքը իրականացվում է տեխնիկական հանձնաժողովների կողմից միջազգային, կառավարական և հասարակական կազմակերպությունների օժանդակությամբ: Յուրաքանչյուր չափորոշիչի ամենավերջին տարբերակը, տեխնիկական հանձնաժողովների կատարած աշխատանքի հետ միասին կարելի է գտնել <http://www.mineactionstandards.org/> կայքում: Առանձին ՀԱԳՄՉ-ները վերանայվում են առնվազն յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ՝ արտացոլելու հակաականային գործողության զարգացող նորմերն ու պրակտիկան և միջազգային կանոնակարգերի և պահանջների շարքում ներառելու կատարվող փոփոխությունները:

Ներածություն

Ականազերծման գործողությունների ակադեմիայի կառույցներից (ԱԳԱՄ) շատերն արդեն կիրառում են որոշ տեսակի հավատարմագրման ընթացակարգեր: Նման հավատարմագրման ձևն ու ծավալը տարբերվում է երկրից երկիր, բայց նպատակը նույն է՝ սահմանելու և հաստատելու ականազերծման գործողությունների ակադեմիայի կազմակերպությունների որակը: Սույն չափորոշիչի նպատակն է ականազերծման գործողությունների քաղաքիչ հանդիսացող Ականների վտանգի իրազեկման (ԱՎԻ) նկատմամբ կիրառել նմանատիպ հավատարմագրման պահանջ: Սա կիրառելի է անկախ նրանից, արդյոք կազմակերպությունն ԱՎԻ է իրագործում ականազերծման գործողությունների համապարփակ ծրագրի շրջանակներում, թե որպես առանձին գործողություն: Խնդիրն է խթանել համընդհանուր և հետևողական մոտեցում, որը կհորդորի ԱՎԻ կազմակերպություններին մշակել և ցուցադրել կառավարման փորձառությունների և գործառնական ունակությունների ընդհանուր առմամբ մի համանման որակ՝ անկախ այդ կազմակերպությունների չափերից կամ փորձառությունից:

Գործառնական, լոգիստիկային և վարչական ակնհայտ առավելություններ կան՝ ակադեմիայի մոնիտորինգի, հավատարմագրման և հետևողականազերծման ստուգիչ մարմինները համակցելով մեկ համընդհանուր “Որակի հավաստման և վերահսկման” մարմնում: Եվ ԱԳԱՄ-ը պետք է հաշվի առնի այս հանգամանքը:

Ականների վտանգի իրազեկմամբ զբաղվող կազմակերպությունների և գործողությունների հավատարմագրում

1. Ծավալ

Սույն չափորոշիչը մանրամասներ և ուղեցույց է ապահովում՝ Ականների վտանգի իրազեկման (ԱՎԻ) կազմակերպությունների և նրանց գործառնական գործողությունների հավատարմագրման համակարգի իրականացման վերաբերյալ:

Ականազերծման Որակի կառավարման (ՈԿ) ընդհանուր նկարագիրը, որն ընդգծում է հավատարմագրման կարևորությունը, ներկայացված է ՀԱԳՄՉ 07.30-ի բաժին 4-ում: Եթե տվյալ բաժինն առանձնահատուկ կերպով վերաբերում է ականազերծման գործողություններին, ապա մանրակրկիտ և համապարփակ հավատարմագրումը հավասարապես կարևոր է նաև ԱՎԻ կազմակերպությունների և գործողությունների համար:

2. Փաստաթղթեր

Հավելված Ա-ում բերված է նորմատիվ փաստաթղթերի ցանկը: Նորմատիվ հղումները կարևոր փաստաթղթեր են, որոնց հղում է կատարվում սույն չափորոշիչում և որոնք կազմում են սույն Ուղենիշի դրույթների մի մասը:

3. Տերմիններ, սահմանումներ և հասկացվումներ

ՀԱԳՄՉ-ի չափորոշիչների շարքում «պետք է», «հարկավոր է» և «կարող է» բառերն օգտագործված են համապատասխանության նախատեսված մակարդակը ցույց տալու նպատակով: Այդ կիրառումը համապատասխանում է ISO չափորոշիչների և ուղենիշների լեզվի հետ:

ա) «պետք է» կիրառվում է ցույց տալու համար այն պահանջները, մեթոդները կամ առանձնահատկությունները, որոնք պետք է ընդունվեն՝ չափորոշիչին ամբողջությամբ բավարարելու համար.

բ) «հարկավոր է» օգտագործվում է նախընտրելի պահանջները, մեթոդները կամ առանձնահատկությունները ցույց տալու համար.

գ) «կարող է» օգտագործվում է գործողության հնարավոր մեթոդը կամ ընթացքը ցույց տալու համար:

“Ականների վտանգի մասին իրազեկում” (ԱՎԻ) տերմինը վերաբերում է այն գործողություններին, որոնք ուղիներ են փնտրում նվազեցնելու ականներից/Պատերազմի պայթուցիկ մնացորդներից (ՊՊՄ) ստացած վնասվածքների վտանգը՝ բարձրացնելով իրազեկվածությունը և խթանելով վերաբերմունքի փոփոխություն, այդ թվում նաև հանրային տեղեկությունների տարածում, ուսուցում և վերապատրաստում և ականազերծման գործողությունների վերաբերյալ փոխգործակցություն համայնքների հետ:

«Ականազերծման գործողությունների ակադեմիայի կառույց» (ԱԳԱՄ) տերմինը վերաբերում է ականապատված բոլոր այն երկրների կառավարության գերատեսչություններին, կազմակերպություններին կամ հաստատություններին, որոնք պատասխանատվություն են կրում ականազերծման գործողությունների կանոնակարգման, կառավարման և համակարգման համար: Դեպքերի մեծ մասում Հակասկանային ակադեմիայի կենտրոնը (ՀԱԿ) կամ դրան համարժեք հաստատությունը հանդես է գալիս որպես ԱԳԱՄ կամ գործում է նրա անունից: Որոշ իրավիճակներում և դեպքերում ՄԱԿ-ի կամ մեկ այլ միջազգային ճանաչված մարմնի համար կարող է անհրաժեշտ և նպատակահարմար լինել ստանձնել ԱԳԱՄ-ի բոլոր պարտականությունները կամ դրանց մի մասը և իրականացնել դրա բոլոր գործառնությունները կամ դրանց մի մասը:

“ԱՎԻ կազմակերպություն” տերմինը վերաբերում է ցանկացած կազմակերպությանը, այդ թվում նաև պետական, ոչ պետական, քաղաքացիական հասարակության կազմակերպությանը, (օրինակ՝ կանանց միություն, երիտասարդական միություն, կարմիր խաչի և մահիկի միություններ), առևտրային հաստատություններ և զինվորականներ (ներառյալ խաղաղապահ ուժերը), որոնք պատասխանատու են ԱՎԻ նախագծերի և առաջադրանքների իրականացման համար: ԱՎԻ կազմակերպությունը կարող է հիմնական կապալառու, ենթակապալառու, խորհրդատու կամ գործակալ լինել: “ԱՎԻ ենթամիավոր” տերմինը վերաբերում է կազմակերպության այն ստորաբաժանմանը, անկախ անվանումից, որը հավատարմագրված է կատարելու նախատեսված մեկ կամ մի քանի ԱՎԻ գործողություններ, ինչպիսիք են հանրային իրազեկման նախագիծ, դպրոցական կրթական նախագծեր կամ ականազերծման գործողություններում համայնքի հետ կապի ապահովման նախագծի գնահատում:

“Նախագիծ” տերմինը վերաբերում է համաձայնեցված նպատակ ունեցող մի գործողությանը կամ փոխկապակցված գործողությունների շարքին: Նախագիծը սովորաբար ստույգ տևողություն և աշխատանքային ծրագիր է ունենում: Այդ նպատակին հաջողությամբ հասնելու համար անհրաժեշտ ռեսուրսները/միջոցները սովորաբար սահմանվում և համաձայնեցվում են նախքան նախագծի մեկնարկը¹:

“Ծրագիր” տերմինը ենթադրում է կազմակերպության միջնաժամկետից երկարաժամկետ գործողությունները, որոնք տեղի են ունենում այդ կազմակերպության տեսլականի և ռազմավարական նպատակների իրագործման համար: Ականազերծման գործողությունների ծրագիրը բաղկացած է ականազերծման գործողությունների կապակցված նախագծերի շարքից: ԱՎԻ ծրագիրը նմանապես բաղկացած է ԱՎԻ կապակցված նախագծերի շարքից:

Տվյալ չափորոշիչի մեջ օգտագործված տերմինների, սահմանումների և հապավումների ցանկը բերված է Հավելված Բ-ում: ՀԱԳՄՉ չափորոշիչների շարքում օգտագործված բոլոր տերմինների, սահմանումների և հապավումների ամփոփ ցանկը բերված է ՀԱԳՄՉ 04.10-ում՝ Ականազերծման գործողությունների տերմինների, սահմանումների և հապավումների հավաքածու:

4. Հավատարմագրում

Սույն չափորոշիչը հստակ տարբերակում է դնում կազմակերպության հավատարմագրման և գործողություններ հավատարմագրման միջև:

1. Ականազերծման գործողությունների մեջ նպատակ սահմանելու մեթոդը, ինչպես նաև այդ նպատակին հասնելու միջոցները և անհրաժեշտ ռեսուրսները սովորաբար կոչվում են “նախագծի առաջարկ” կամ “նախագծի փաստաթուղթ”:

Կազմակերպությունների հավատարմագրումը մի գործընթաց է, որի միջոցով ԱՎԻ կազմակերպությունը պաշտոնապես ճանաչվում է իրավասու և ունակ՝ ապահով կերպով, արդյունավետորեն և բարձր արտադրողականությամբ նախագծելու, կառավարելու և գործառնականորեն իրականացնելու ԱՎԻ գործողություններ: Ականազերծման գործողությունների մեծամասնության համար ԱԳԱՄ-ն է այն մարմինը, որն ապահովում է հավատարմագրումը: Միջազգային կազմակերպությունները, ինչպիսիք են ՄԱԿ-ը կամ տարածաշրջանային մարմինները, նույնպես կարող են ներմուծել հավատարմագրման նախագծեր: Հավատարմագրումը կտրվի երկրի տարածքում գտնվող կազմակերպության գլխամասային գրասենյակին սահմանափակ տևողությամբ՝ սովորաբար երկուսից-երեք տարի ժամկետով կամ էլ այնքան ժամանակ, որքան այդ կազմակերպությունը գործառնական կամ ակտիվ կգործի:

Գործողությունների հավատարմագրումը մի գործընթաց է, որի միջոցով ԱՎԻ կազմակերպությունը պաշտոնապես ճանաչվում է իրավասու և ունակ՝ ԱՎԻ առանձին գործողություններ իրականացնելու; սա երբեմն կարող է անվանվել որպես “սերտիֆիկացում”՝ տարբերակելու որևէ երկրում կազմակերպության գործողության հավատարմագրման և դրա որոշակի ու հստակ առաջադրանքների հավատարմագրման միջև: Գործառնական յուրաքանչյուր հավատարմագրում պետք է վերաբերի այն կարողություններին, որոնք պահանջվում են առանձին ԱՎԻ գործառնության (կամ բաղադրիչի) իրագործման համար, օրինակ՝ փոխգործակցություն համայնքի հետ, հանրային տեղեկությունների տարածում կամ կրթության և վերապատրաստման գործողություններ: Նման հավատարմագրման շնորհումը ենթադրում է, որ այդ կարողությունները չեն փոփոխվելու սկզբնական հավատարմագրման ծավալի կամ նպատակի սահմաններից դուրս:

Դեպքերի մեծամասնությունում նպատակահարմար կլինի հավատարմագրումը շնորհել երկու փուլով: Առաջին փուլն ընդգրկում է ԱԳԱՄ-ի կամ նրա գործակալի կողմից պայմանական “վերացական” գնահատումը, որը հիմնված է այն փաստաթղթային վկայությունների վրա, որոնք ներկայացրել է ԱՎԻ կազմակերպությունը, ինչպիսիք են ուսումնական պլանը, կազմակերպության կառուցվածքը, կառավարման և վերապատրաստման որակավորումը և հաստատված փորձառնությունը: Երկրորդ փուլն ընդգրկում է “տեղային” (հենց տեղում) գնահատումը՝ ամրագրելու, որ ուսումնական պլանը, նյութերն ու ընթացակարգերը կիրառվում են այնպես, ինչպես նախատեսված է, և ԱՎԻ գործողություններն իրականացվում են անվտանգ, արդյունավետ և բարձր արտադրողական կերպով:

5. Ընդհանուր պահանջներ

5.1. Հիմնական նկատառումներ

ԱՎԻ հավատարմագրման ձեռքբերման և պահպանման հիմնական նկատառումներն են՝

- a) Դիմող կազմակերպությունը պետք է իրավասու լինի կիրառելու ՀԱԳՄՉ-երի ընդհանուր դրույթները և/կամ համապատասխան ազգային չափորոշիչները և ԱԳԱՄ-ի առանձնահատուկ դրույթները, այդ թվում նաև ֆինանսական և ապահովագրական պահանջները;
- b) Կազմակերպության հավատարմագրումը կշնորհվի ԱՎԻ կազմակերպությանը միայն այնքան ժամանակով, որքան այն կգործի ՀԱԳՄՉ-երին և/կամ ազգային չափորոշիչներին ու կանոնակարգերին համաձայն;

Կ) Գործառնական հավատարմագրումը կշնորհվի հավատարմագրված կազմակերպությանը և ԱՎԻ-ով զբաղվող դրա ստորաբաժանումներին միայն, անկախ դրանց անվանումից, որոնք գործում են կազմակերպության հավատարմագրման համաձայնագրի շրջանակներում և համապատասխանում են ՀԱԳՄՉ-երին և/կամ ազգային չափորոշիչներին ու կանոնակարգերին:

Գործնականում հավատարմագրումը կարող է ընդգրկվել ականագերծման գործողությունների անվանագրերի տեղեկի գործընթացի մեջ, հատկապես երբ անվանագրի կնքման երկփուլ գործընթաց է կիրառվում, երբ հավատարմագրումը դառնում է նախա-ընտրական գործընթացի ծանրակշիռ բաղադրիչը:

5.2. Հավատարմագրման գործընթաց

Հավատարմագրման գործընթացի ամփոփ նկարագիրը սխեմայի տեսքով բերված է Հավելված Գ-ում և մանրամասնորեն նկարագրված է ստորև:

5.2.1. Հավատարմագրման հայցադիմում

ԱԳԱՄ-ի կամ դրա գործակալների կողմից թողարկված հրահանգներին համաձայն ԱՎԻ կազմակերպությունը պետք է նախնական հայցադիմում ներկայացնի:

5.2.2. Հայցադիմումի “վերացական” (պայմանական) գնահատում

ԱՎԻ կազմակերպությունից հայցադիմումի և հարակից փաստաթղթերի ստանալուն պես ԱԳԱՄ-ը պետք է հաստատի հայցադիմումի ստանալու փաստը և անհրաժեշտության դեպքում դիմողից պետք է խնդրի ապահովել լրացուցիչ տեղեկություններ:

Կազմակերպության հավատարմագրման համար “վերացական” (պայմանական) գնահատումը կիրականացվի ԱԳԱՄ-ի կամ նրա գործակալների կողմից: Այդ գնահատումը պետք է հաշվի առնի դիմողի՝

- a) Կազմակերպության կառուցվածքը և երկրում առաջարկվող ներկայացուցչությունը՝ ներառելով ենթակապալառուներ և համատեղ ձեռնարկություններ օգտագործելու ձևակերպումները: Պետք է ճանաչվեն նաև կազմակերպությանը տրված և գոյություն ունեցող այլ հավատարմագրումները;
- b) Կառավարման անձնակազմի պաշտոնական որակավորումը և գործնական փորձառությունը, որոնք ձեռք են բերվել ականագերծման գործողությունների անխորդ ծրագրերում: Պետք է ճանաչվեն նաև նպատակահարմար և հայտնի մասնագիտական հաստատությունների կամ մարմինների անդամակցությունները;
- c) Ֆինանսական իրավիճակը;
- d) Զերծ լինելը չլուծված կամ սպասվող/ընթացիկ ցանկացած իրավական գործողությունից կամ սպասվող/ընթացիկ ցանկացած վիճարկումներից պայմանագիր շնորհող մարմնի հետ;
- e) Նախագծման և նաժագծերի կառավարման կարողությունները;
- f) Թիկունքային նախագծման ընթացակարգերը՝ ներառելով սարքավորումների գնումը, գնահատումը, պահպանումն ու վերականգնումը;
- g) Ֆինանսական նախագծման և վերահսկման ընթացակարգերը;

- h) Տեղեկությունների կառավարման համակարգերն ու քարտեզագրումը;
- i) Կառավարման ուսուցման նախագծերը և աշխատակազմի հմտությունների զարգացման ծրագրերը;
- j) Անվտանգության և աշխատանքային առողջության (ԱԱՀ) քաղաքականությունը;
- k) Ապահովագրությունը՝ թե անձնակազմի բժշկական ապահովագրություն, և թե ապահովագրություն երրորդ կողմի պատասխանատվությունից;
- l) Որակի կառավարման (ՈԿ) համակարգերը;
- m) Մասնակցությունը հավատարմագրման այլ նախագծերում, որոնք ցուցադրում են այդ կազմակերպության՝ որակի կառավարման համակարգի արդյունավետությունը:

Գործառնական հավատարմագրման համար “վերացական” (պայմանական) գնահատումը պետք է հաշվի առնի դիմողի՝

- a) Ստորաբաժանումների կազմակերպական կառուցվածքը;
- b) Մարդկային հմտությունները (գործառնական և աջակցման անձնակազմի պաշտոնական որակավորումներ և փորձառություն);
- c) Գործառնական ընթացակարգերն ու ուղեցույցը (որոնք անվանվում են ԳՄԸ-ներ): ԱՎԻ կազմակերպությունների բնույթն այնպիսին է, որ կարող է անհրաժեշտ կամ ավելի նպատակահարմար լինել վերանայելու նախագծային պլանները, քան ԳՄԸ-ները: Նման դեպքերում նախագծի վերանայումը պետք է գնահատի արդյոք՝
 - (1) Նախագիծն արտացոլում է նախագծի տևողության բոլոր փուլերի նկատառումը;
 - (2) Նախագիծը հիմնված է համապատասխան կարիքների գնահատման վրա;
 - (3) Ազգային, կազմակերպական և համայնքային մակարդակում շահառուների նկատառում կա;
 - (4) Նախագիծն առանձանահատուկ է իր համատեքստում և օժանդակվում է տեղեկությունների կառավարման համապատասխան համակարգով;
 - (5) Նախագիծն ունի հստակ ձևակերպված առաքելություն, նպատակներ, գործողություններ և ցուցանիշներ;
 - (6) Նախագծի ուսումնական/կրթական բաղադրիչը համապատասխանաբար արտացոլում է կազմակերպական անվտանգության, ապահովության հաղորդագրությունների և վերապատրաստման նկատառումները՝ ըստ նպատակահարմարության;
 - (7) Կրթական մեթոդաբանությունը և նյութերը նպատակահարմար են;
 - (8) ՀԱԳՄՉ-երի հիմնական սկզբունքներում սահմանված նորմերը ներկայացված են նախագծի համատեքստում;
- d) Աշխատավայրի ԱԱՀ-ի ընթացակարգերն ու պրակտիկան;

- e) Ստորաբաժանումների կողմից ստացված նախորդ հավատարմագրումները կամ սերտիֆիկատները, որոնք ցուցադրում են դրանց գործառնական կարողությունների արդյունավետությունը;
- f) ԱԳԱՄ-ի լրացուցիչ պահանջները (օրինակ՝ ենթակապալառուների և տեղացի աշխատուժի կիրառում):

Եթե ԱԳԱՄ-ը գտնում է, որ հավատարմագրման ոչ բոլոր պահանջներն են բավարարվել, ապա պետք է անմիջապես տեղեկացնել ԱՎԻ և ներկայացնել նրա ոչ բավարար հայցադիմումի պատճառները: Հնարավորության դեպքում դիմողը պետք է ուղղիչ գործողություն ձեռնարկելու հնարավորություն ունենա:

Եթե ԱՎԻ կազմակերպությունն անկարող է բավարարել հավատարմագրման պահանջները և անկարող է ողջամիտ ժամանակահատվածում ուղղիչ գործողություններ ձեռնարկել, ապա հայցադիմումը պետք է կասեցվի, իսկ ԱՎԻ կազմակերպությունը տեղեկացվի դրա մասին:

5.2.3. “Տեղային” (հենց տեղում) գնահատում

“Տեղային” գնահատման նպատակն է հաստատել, որ ԱՎԻ կազմակերպության կողմից իր հայցադիմումի մեջ առաջարկված կառավարման փորձառնություններն ու գործառնական ընթացակարգերը կիրառվում են անվտանգ, արդյունավետ և բարձր արտադրողական կերպով:

“Տեղային” գնահատումը պետք է իրականացվի ԱԳԱՄ-ի կամ նրա գործակալների կողմից, և այդ գնահատումը պետք է ընդգրկի՝

- a) Կառավարման և վարչական գրասենյակների և հարմարությունների այցելություններ;
- b) Բոլոր ստորաբաժանումների տեղակայման կետերի այցելություններ, այդ թվում նաև աշխատավայրերը և աջակցման աշխատակետերը;
- c) Ստորաբաժանումների դիտարկում իրենց ուսուցման/վերապատրաստման վերջին փուլի ընթացքում;
- d) Նյութերի և սարքավորումների դաշտային փորձարկման ու գնահատման փորձարկման դիտարկում և արձանագրում;
- e) ԱՎԻ փաստացի գործողությունների դիտարկում և արձանագրում;
- f) Նախագծի ողջ ընթացքում համայնքի ներգրավման և ականազերծման գործողությունների ինտեգրման աստիճանի դիտարկում:

Սովորաբար “վերացական” (պայմանական) հավատարմագրման և “տեղային” (հաստատական) հավատարմագրման միջև ուշացում/հետաձգում է տեղի ունենում: Այսպիսի դեպքում ԱԳԱՄ-ը պետք է պայմանական հավատարմագրում շնորհի մինչև կավարտվի լիարժեք հավատարմագրման գործընթացը: Կախված պայմանական հավատարմագրման դրույթներից՝ ԱՎԻ կազմակերպությանը կարող է անհրաժեշտ լինել մեկնարկել իր աշխատանքները նախքան “տեղային” (հաստատական) գնահատման իրականացումը:

5.3. Հավատարմագրման երկարաձգում կամ ձևափոխում

5.3.1. Կառավարման համակարգի ձևափոխում կամ փոփոխություն

Եթե ԱՎԻ կազմակերպության ղեկավարությունը մտադրություն ունի կամ նրանից պահանջվում է կառավարման իր կառուցվածքում զգալի կամ նշանակալից փոփոխություններ կատարելու (անկախ դրանց նպատակից), որոնք կարող են ազդել այդ կազմակերպության կառավարման կարողությունների վրա, ապա ԱԳԱՄ-ը կամ նրա գործակալները կարող են պահանջել հավատարմագրման երկարաձգում կամ վերանայում: Այդ պատճառով հավատարմագրված կազմակերպությունը պետք է տեղեկացնի ԱԳԱՄ-ին իր կառավարման համակարգի ցանկացած մտադրված ձևափոխման կամ այլ փոփոխությունների մասին, որոնք կարող են ազդել հավատարմագրման համապատասխանեցման վրա: ԱԳԱՄ-ը պետք է պարզորոշի, արդյոք հայտարարված փոփոխությունները պահանջում են վերազնահատման ցանկացած տեսակ՝ “վերացական” թե “տեղային”:

5.3.2. Գործառնական ընթացակարգերի ձևափոխում կամ փոփոխություն

Նույն կերպով հավատարմագրված կազմակերպությունը պետք է տեղեկացնի ԱԳԱՄ-ին իր մեկ կամ մի քանի ստորաբաժանումների գործառնական ընթացակարգերում ցանկացած մտադրված ձևափոխման մասին կամ էլ նոր կամ ձևափոխված մեթոդաբանությունների և նոյթերի ներմուծման մասին: ԱԳԱՄ-ը կամ դրա գործակալները պետք է պարզորոշեն, արդյոք հայտարարված փոփոխությունները պահանջում են “վերացական” թե “տեղային” վերազնահատում:

Եթե փոփոխություններն աննշան են և համահունչ են ՀԱԳՄՉ-երին և/կամ ազգային չափորոշիչներին, ապա կարիք չկա ձեռնարկելու հետագա գործողություններ:

Եթե փոփոխությունները նշանակալից են, ապա ԱԳԱՄ-ը պետք է հաշվի առնի “տեղային” գնահատում իրագործելու տարբերակը: Եթե փոփոխությունները ծանրակշիռ են, իսկ սկզբնական գործառնական հավատարմագրման պայմաններն ու ծավալն այլևս վավեր չեն, ապա ԱԳԱՄ-ը պետք է պահանջի ԱՎԻ կազմակերպությունից, որ նա հայցադիմումով դիմի նոր հավատարմագրում ստանալու համար, ինչպես արդեն նկարագրվել է վերը՝ բաժին 5.2-ում:

5.3.3. Ականների վտանգի իրազեկման (ԱՎԻ) նախագծի փոփոխություններ

Հավատարմագրված կազմակերպությունը պետք է ԱԳԱՄ-ին տեղեկացնի իր նախագծում մտադրված ցանկացած փոփոխության մասին: Եթե նույն գործառնական ընթացակարգեր և գործողությունների նույն ծրագիր է կիրառվելու, ապա կարիք չկա ձեռնարկելու հետագա գործողություններ:

Եթե փոփոխությունները նշանակալից են, ապա ԱԳԱՄ-ը պետք է հաշվի առնի “տեղային” գնահատում իրագործելու տարբերակը: Եթե փոփոխությունները ծանրակշիռ են, իսկ սկզբնական գործառնական հավատարմագրման պայմաններն ու ծավալն այլևս վավեր չեն, ապա ԱԳԱՄ-ը պետք է պահանջի ԱՎԻ կազմակերպությունից, որ նա հայցադիմումով դիմի նոր հավատարմագրման համար, ինչպես արդեն նկարագրվել է վերը՝ բաժին 5.2-ում:

5.4. Մոնիտորինգ

ԱԳԱՄ-ը հավատարմագրված ԱՎԻ կազմակերպությունների և դրանց ստորաբաժանումների մոնիտորինգը պետք է իրականացնի՝ հաստատելու, որ կառավարման համակարգերը և գործառնական ընթացակարգերը համապատասխանում են հավատարմագրման դրույթներին: Նման մոնիտորինգը պետք է պատահականության սկզբունք ունենա, չլինի ներխուժող և չպետք է միջամտի ԱՎԻ գործողությունների իրականացմանը: Մոնիտորինգի հաճախականությունը պետք է պայմանավորված լինի ԱՎԻ կազմակերպության առաջադրանքներով և նախկին գործունեությամբ; այն պետք է համաձայնեցված լինի ԱԳԱՄ-ի և ԱՎԻ կազմակերպության միջև:

ԱԳԱՄ-ի կողմից իրականացվող մոնիտորինգը պետք է վերաբերի ավելի շատ ԱՎԻ մեթոդների և նյութերի որակի ապահովմանը, քան ԱՎԻ արդյունքներին և արդյունավետությանը՝ ականագերծման գործողությունների և ազգային ծրագրի առումով, որին անդրադարձ է կատարվում որպես ազգային գնահատման մի մաս (տես ՀԱԳՄՉ 14.20-ը): ԱԳԱՄ-ը կարող է որևէ մարմին/կառույց նշանակել՝ իր անունից մոնիտորինգ իրականացնելու: ԱԳԱՄ-ի կողմից նշանակված մոնիտորինգի ցանկացած մարմին պետք է համապատասխան անձնակազմ, սարքավորումներ և ուսուցում/պատրաստվածություն ունենա՝ ԱՎԻ կազմակերպության և դրա ստորաբաժանումների արդյունավետ և պատշաճ մոնիտորինգն իրականացնելու համար: ԱՎԻ կազմակերպությունների մոնիտորինգը մանրամասնորեն ներկայացված է ՀԱԳՄՉ 07.41-ում:

Հավատարմագրված կազմակերպությանը ժամանակին և պատշաճ կերպով պետք է տեղեկացնել մոնիտորինգի բոլոր արդյունքների մասին:

5.5. Հավատարմագրման համաձայնագրերի կասեցում և դադարեցում

5.5.1. Կասեցում

ԱԳԱՄ-ը կարող է սահմանափակ ժամկետով կասեցնել ԱՎԻ կազմակերպության կամ դրա ստորաբաժանումներից մեկի հավատարմագրումը, օրինակ հետևյալ դեպքերում՝

- Եթե մոնիտորինգի արդյունքները ցույց են տալիս անհամապատասխանեցում հավատարմագրման համաձայնագրի պահանջներին, որն իր բնույթով չի պահանջում չեղյալ համարել հավատարմագրման վավերությունը;
- Հավատարմագրման համաձայնագրի ոչ պատշաճ կիրառման դեպքում;
- Կառավարման կամ գործառնական կարևոր և նշանակալից փոփոխությունների բացահայտման/ներկայացման անհաջողության դեպքում:

5.5.2. Դադարեցում

ԱԳԱՄ-ը կարող է դադարեցնել հավատարմագրումը հետևյալ դեպքերում՝

- Եթե հավատարմագրված կազմակերպությունը դադարեցնում է իր գործունեությունը;
- Եթե հավատարմագրված կազմակերպությունը չի ցանկանում երկարացնել/շարունակել հավատարմագրման համաձայնագիրը;
- Եթե փոխվել են չափորոշիչների կամ օրենքների պահանջները կամ դրույթները, և հավատարմագրված կազմակերպությունը չի կարող կամ չի ցանկանում ապահովել համապատասխանեցումը նոր պահանջներին կամ դրույթներին;

- d) Եթե մոնիտորինգը բացահայտում է, որ անհամապատասխանեցումը հավատարմագրման համաձայնագրին լուրջ բնույթ է կրում, ինչպիսիքն են անվտանգության և աշխատանքային առողջության դրույթների կրկնվող ոտնահարումները;
- e) Եթե ոչ համարժեք միջոցառումներ են նախաձեռնվել ի պատասխան հավատարմագրման կասեցմանը:

Անհամապատասխանեցման լուրջ բնույթը կարող է ներառել հավատարմագրված կառավարման համակարգերի կամ գործառնական ընթացակարգերի կիրառման կրկնվող անհաջողությունը, մոնիտորինգի կամ ստուգման իրականացումից հրաժարվելը, մոնիտորինգի կամ ստուգման միջամտությունը, ոչ ճշգրիտ տեղեկությունների ընդգրկումը վերապատրաստման կամ կրթական նյութերում, որոնք կարող են տեղի բնակչությանն անընդունելի ռիսկին ենթարկել: Նախքան հավատարմագրման համաձայնության դադարեցումը ԱԳԱՄ-ը պետք է պարզորոշի այն միջոցառումները, որոնք նախաձեռնվելու են՝ շտկելու/վերականգնելու այն ոչ ճշգրիտ և/կամ շփոթեցնող տեղեկությունները, որը նախապես տրամադրվել էր համայնքին: Այդ պատասխանատվությունը կդրվի կամ ԱՎԻ կազմակերպության վրա, կամ էլ՝ ԱԳԱՄ-ի: Այդ պարտավորությունները պետք է հատկորոշվեն նրանց պայմանագրում:

6. Հավատարմագրման մարմին՝ ընդհանուր պարտավորություններ

6.1. Ընդհանուր դրույթներ

ԱԳԱՄ-ը պետք է ստեղծի/հիմնադրի հավատարմագրման մարմին: Հավատարմագրման մարմինը, ինչ անվանում էլ այն կրի, պետք է ունենա անհրաժեշտ փաստաթղթեր, որոնք նկարագրում են նրա պարտավորությունները, հավատարմագրման գործընթացում կիրառվելիք մեթոդները և նրա գործողությունների տեխնիկական նկարագիրը:

6.2. Անկախություն, անկողմնակալություն և անկեղծություն

Հավատարմագրման մարմնի անձնակազմը պետք է ազատ/անկախ լինի ցանկացած քաղաքական, առևտրային, ֆինանսական և այլ ազդեցություններից, որոնք կարող են ազդել նրանց որոշումների վրա: Քաղաքականությունն ու ընթացակարգերը պետք է կիրառվեն՝ ապահովելու, որ հավատարմագրման մարմնից դուրս գտնվող անձինք և կազմակերպությունները չեն կարող ներագդել հավատարմագրման մարմնի կողմից իրականացված ստուգումների, գնահատումների կամ մոնիտորինգի արդյունքների վրա:

Հավատարմագրման մարմինն ու դրա անձնակազմը չեն ներգրավվելու այնպիսի գործողություններում, որոնք կարող են հակասության մեջ լինել որոշում ընդունելու իրենց անկախության և անկեղծության հետ՝ նրանց ստուգումների, գնահատման կամ մոնիտորինգի գործողությունների առումով: Հավատարմագրման մարմնի ծառայությունները պետք է հասանելի լինեն բոլոր շահագրգիռ կողմերին: Այն ընթացակարգերը, համաձայն որոնց գործում է այդ մարմինը, պետք է կազմակերպվեն/համակարգվեն ոչ խտրական/ոչ դիֆերենցված կերպով:

6.3. Գաղտնիություն

Հավատարմագրման մարմինը պետք է ապահովի տեղեկությունների գաղտնիությունը, որը ձեռք է բերվել իր գործողությունների ընթացքում: Մեփականության իրավունքները պետք է պաշտպանված լինեն: Գործնականում հավատարմագրման մարմնի գործերը չեն հրապարակվի և ոչ մեկին՝ բացառությամբ ԱԳԱՄ-ին, այնուամենայնիվ հավատարմագրման պահանջներին անհամապատասխանեցման պատճառները պետք է հաղորդվեն դիմող կազմակերպություններին:

6.4. Կազմակերպում և կառավարում

Հավատարմագրման մարմինը պետք է մի կազմակերպություն ունենա, որը թույլ կտա նրան պահպանել իր տեխնիկական գործառնություններն արագորեն և բավարար կերպով իրագործելու կարողությունը: Այդ կառույցը պետք է տեխնիկական ղեկավար ունենա, ով կնշանակվի որպես ԱՎԻ հավատարմագրման գործընթացի պատասխանատու անձ, որը կունենա համապատասխան որակավորում և փորձառու կլինի ԱՎԻ և հավատարմագրման գործընթացի իրագործման որոշում և ընդհանուր պատասխանատվություն կկրի ապահովելու այն փաստը, որ հավատարմագրման գործողություններն իրականացվում են համաձայն ՀԱԳՄՉ-երին և այլ համապատասխան չափորոշիչներին: Այս “ԱՎԻ” ղեկավարը հնարավորության դեպքում պետք է մշտական աշխատակից լինի, սակայն ականագերծման գործողությունների ան ծրագրի վաղ շրջանում դա կարող է լինել համապատասխան որակավորում ունեցող փորձագետը:

Հավատարմագրման մարմինը պետք է մշակի և պահպանի արձանագրված ընթացակարգեր: Այն դեպքերում, երբ հավատարմագրման մարմինն ապահովում է նաև ստուգման և մոնիտորինգի ծառայություններ, ապա նրա գործառնությունների միջև փոխհարաբերությունը նույնպես պետք է հստակորեն սահմանվի:

6.5. Կառավարման համակարգ

Հավատարմագրման մարմինը պետք է սահմանի և փաստաթղթերով արձանագրի կառավարման իր համակարգն ու ընթացակարգերը (այդ թվում նաև իր ներքին ՈԿ համակարգերը) և պետք է ապահովի, որ կառավարման իր քաղաքականությունը հասկանալի/հասանելի է, իսկ ընթացակարգերն իրականացվում և պահպանվում են կազմակերպության բոլոր մակարդակներում: Եթե իր համակարգերն ու ընթացակարգերն ազդեցություն են ունենում ականագերծման գործողությունների ան ծրագրի իրականացման վրա, ապա այդ կառույցի և ԱՎԻ կազմակերպության միջև աշխատանքային հարաբերությունները պետք է համաձայնեցված լինեն և պայմանագրային ձևակերպումների մի մասը կազմեն:

Հավատարմագրման մարմնի ղեկավարությունը պետք է նշանակի մեկին, ով անկախ այլ պարտականություններից հավատարմագրման կազմակերպության ներսում/կազմում հատկորոշված իրավասություն և պարտավորություն կունենա ՈԱ համար: Եվ այդ անձն ուղղակի կապ պետք է ունենա ԱԳԱՄ-ի բարձրաստիճան ղեկավարներից մեծամասնության հետ:

6.6. Անձնակազմ

Հավատարմագրման մարմինը մշտական աշխատակիցների բավականաչափ թվաքանակ պետք է ունենա՝ այն ծավալի փորձառնությամբ, որը պահանջվում է սովորական իր գործառնություններն իրագործելու համար:

6.7. Հավատարմագրման մեթոդներ և ընթացակարգեր

Հավատարմագրման մարմինը պետք է ստեղծի և պահպանի “վերացական” գնահատումների և ստուգումների ընթացակարգերը, որոնք սահմանվել են սույն չափորոշիչի և այլ համապատասխան չափորոշիչների պահանջներում, որոնց համապատասխանեցումը պետք է պարզորոշվի:

6.8. Արձանագրություններ

Հավատարմագրման մարմինը պետք է պատրաստի և պահպանի բոլոր գնահատումների և ստուգումների արձանագրությունները և ցանկացած այլ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են դրանք հասկանալու և մեկնաբանելու համար: Բոլոր արձանագրությունները պետք է ապահով պահպանվեն առնվազն հինգ տարվա ժամկետով, և դրանց անվտանգ պահպանումը պետք է դիմողին վստահություն ներշնչի, եթե օրենքն այլ բան չի պահանջում:

6.9. Բողոքարկումներ

ԱԳԱՄ-ն արդար և անկողմնակալ համակարգ պետք է ստեղծի՝ ԱՎԻ կազմակերպություններին հնարավորություն տալով բողոքարկելու հավատարմագրման մարմնի այն որոշումները, որոնք նրանք համարում են անարդար, կամ երբ նոր փաստեր են երևան գալիս:

Բողոքարկման համակարգը պետք է ներառի անկախ արբիտրաժի կիրառումը:

7. Ուղղորդող սկզբունքներ

Բոլոր ՀԱԳՄՉ-երը կազմված են հինգ ուղղորդող սկզբունքներին համաձայն, ինչպես դա ներկայացված է ՀԱԳՄՉ 07.11-ում՝ *ԱՎԻ կառավարման ուղեցույցում*, և առավել մանրամասնորեն ՀԱԳՄՉ 01.10-ում՝ *ՀԱԳՄՉ-երի կիրառման ուղեցույցում*: Բացի դրանից ԱՎԻ չափորոշիչների շարքը հիմնված է ԱՎԻ պահանջների և սկզբունքների վրա, որոնք հաշվի են առնվում նախագծի ողջ ընթացքի յուրաքանչյուր փուլի համար և հիմքեր են ապահովում չափորոշիչի ձևակերպման համար: Այդ պահանջներից յուրաքանչյուրին անդրադարձ է կատարվում ստորև՝ ԱՎԻ կազմակերպությունների և գործողությունների հավատարմագրման վերաբերյալ ուղեցույց ապահովելու:

7.1. Շահառուների մասնակցություն/ներգրավում

Հավատարմագրում շնորհելու միտումով ԱՎԻ կազմակերպության նախագծային ծրագիրը վերանայելիս՝ հավատարմագրման մարմինը պետք է որոշի, արդյոք նախագծային ծրագիրը հիմնավորում է, որ բոլոր համապատասխան շահառուները ներգրավված են լինելու ԱՎԻ նախագծի ողջ ընթացքի յուրաքանչյուր փուլում:

7.2. Համակարգում

Հավատարմագրում շնորհելու միտումով ԱՎԻ կազմակերպության նախագծային ծրագիրը վերանայելիս՝ հավատարմագրման մարմինը պետք է որոշի, արդյոք նախագծային ծրագիրը նշում է, թե ինչպես է ԱՎԻ կազմակերպությունը պլանավորում իր ԱՎԻ գործողությունները համակարգել համապատասխան ազգային և տեղի իշխանությունների մարմինների հետ, ինչպես նաև ականազերծման գործողություններին, մարդասիրական և զարգացման այլ կազմակերպությունների հետ:

7.3. Ինտեգրում

Հավատարմագրում շնորհելու միտումով ԱՎԻ կազմակերպության նախագծային ծրագիրը վերանայելիս՝ հավատարմագրման մարմինը պետք է որոշի, արդյոք նախագծային ծրագիրը նշում է, թե ինչպես է ԱՎԻ կազմակերպությունը պլանավորում իր գործողություններն ընտեգրել/ընգրկել ականազերծման գործողությունների համար ավելի լայնածավալ ազգային ծրագրում՝ դրա առկայության դեպքում, կամ էլ ականազերծման գործողությունների համար, մարդասիրական և զարգացման այլ ծրագրված և ընթացիկ գործողություններում:

7.4. Համայնքի մասնակցություն և իրավասություն

Հավատարմագրում հայցող ԱՎԻ կազմակերպությունները պետք է ապահովեն ականներից տուժած համայնքների անդամների մասնակցությունը ԱՎԻ նախագծում: Նախագծերը պետք է ներառեն այնպիսի ռազմավարություն, որը կնպաստի ականներից տուժած համայնքների մասնակցությանը ականազերծման գործողությունների համար բոլոր գործողությունների հերթականացմանը և պլանավորման գործընթացին:

7.5. Տեղեկությունների կառավարում և փոխանակում

Ցանկացած նախագծի կարևոր տարրն է տեղեկությունների կառավարումը: Հավատարմագրում հայցող ԱՎԻ կազմակերպությունները պետք է տեղեկությունների կառավարման համակարգ ունենան և տեղեկություններ մշակելու և կառավարելու կարողություն պետք է ցուցադրեն:

ԱՎԻ կազմակերպությունները պետք է ցուցադրեն նաև, որ հնարավորության դեպքում օգտվում են վստահելի երկրորդական աղբյուրներից՝ խուսափելու ականներից տուժած համայնքների վերաբերյալ տվյալների կրկնօրինակման և չափազանց ծավալուն տվյալների հավաքագրման բեռից:

7.6. Համապատասխան հասցեականություն

Հավատարմագրում հայցող ԱՎԻ կազմակերպությունները պետք է ցուցադրեն, որ նրանց նախագծերն արդյունավետորեն կանդրադառնան կարիքավոր խմբերի կարիքներին և հստակ նպատակներ կսահմանեն, որոնք վերաբերում են առանձին թիրախային խմբերին:

7.7. Կրթում/Ուսուցում

Հավատարմագրման գործընթացը պետք է ապահովի, որ անվտանգ վարվելակերպի բոլոր հաղորդագրությունները, որոնք ընդգրկված են ԱՎԻ նախագծերում, նպատակահարմար են, ճշգրիտ են և չեն հորդորում վտանգավոր վարվելակերպ:

Հավատարմագրում հայցող կազմակերպությունը պետք է ցուցադրի կրթական միջոցներ և մեթոդաբանություններ կիրառելու իր կարողությունը, որոնք բավարարում են ուսուցման նյութերի, ուսուցման մեթոդների վերաբերյալ որոշակի հիմնական չափանիշները, որոնք նպատակահարմար են ծրագրված ԱՎԻ գործողության համար, օրինակ՝ հանրային տեղեկությունների տարածում կամ վերապատրաստում ըստ դպրոցական համակարգի: Կրթական հմտությունների թարմացնող վերապատրաստման պահանջը պետք է կանոնավոր կերպով գնահատվի:

7.8. Վերապատրաստում

Հավատարմագրում հայցող ԱՎԻ կազմակերպությունները պետք է վերապատրաստման պլան նախատեսեն իրենց և գործընկեր կազմակերպությունների անձնակազմի համար: Սա պետք է ներառի նաև վերապատրաստում ԱԱՀ և ականների ու ՊՊՄ-ների անվտանգության գծով:²

8. Պարտավորություններ

8.1. Միավորված ազգերի կազմակերպություն

Առանձին իրավիճակներում և պահերին ՄԱԿ-ը կարող է ստանձնել ԱԳԱՄ-ի պարտականությունների մի մասը կամ ամբողջությամբ և իրականացնել ԱԳԱՄ-ի գործառնությունների մի մասը կամ ամբողջությամբ, այդ թվում նաև հավատարմագրման պարտավորությունը: Նման դեպքերում ՄԱԿ-ը պետք է ապահովի նպատակահարմար տեխնիկական աջակցություն, այդ թվում նաև համապատասխան որակավորում ունեցող և ԱՎԻ գծով փորձառու անձնակազմ:

8.2. Ականագերծման գործողությունների և ազգային մարմին (ԱԳԱՄ)

ԱԳԱՄ-ը կամ դրա անունից գործող կազմակերպությունը պատասխանատու է՝

- a) ԱՎԻ կազմակերպությունների ու գործողությունների հավատարմագրման համակարգ ստեղծելու համար;
- b) Ազգային չափորոշիչներ հատկորոշելու և ԱՎԻ կազմակերպությունների ու գործողությունների հավատարմագրման վերաբերյալ ուղեցույց ապահովելու համար;
- c) Հավատարմագրման մարմնի աշխատանքի մոնիտորինգն իրականացնելու համար՝ ապահովելով, որ համակարգը կիրառվում է արդար և անկողմնակալ կերպով, և հավատարմագրումը չի ընդհատում կամ հետաձգում ԱՎԻ գործողությունները;
- d) Հավատարմագրման մարմնի առաջարկությունների վերաբերյալ համապատասխան հետևողական գործողության իրականացումն ապահովելու համար:

ԱԳԱՄ-ը կամ դրա անունից գործող կազմակերպությունը պետք է՝

- e) հավատարմագրման մարմին նշանակի և դրան հավատարմագրում շնորհի;
- f) հավատարմագրման մարմնի պարբերաբար արտաքին ՈԱ աուդիտ-ստուգումներ իրականացնի:

8.3. Հավատարմագրման մարմին

Հավատարմագրման մարմինը պետք է՝

- a) (ԱԳԱՄ-ից) ձեռք բերի հավատարմագրում՝ գործելու որպես հավատարմագրման մարմին;
- b) Հավատարմագրի ԱՎԻ կազմակերպությունները և նրանց ստորաբաժանումները;

2. Ականների անվտանգության ձեռնարկ, ՄԱԿԱԾ:

- c) Առանց ուշացման ուսումնասիրի հայցադիմումները՝ ապահովելով, որ հետաձգումներն անտեղի ազդեցություն չունենան դիմող կազմակերպությունների գործառնական արդյունավետության վրա: Եթե հետաձգումից հնարավոր չէ խուսափել, ապա կարող է նպատակահարմար լինել հաշվի առնելու պայմանական հավատարմագրում շնորհելու տարբերակը:
- d) Հավատարմագրում շնորհի և տեղային այցելությունների և ստուգումների վերաբերյալ պատրաստի ԱԳԱՄ-ի կողմից պահանջվող փաստաթղթեր:

8.4. ԱՎԻ կազմակերպություն

ԱՎԻ իրագործող կազմակերպություն պետք է՝

- a) ԱՎԻ-ն նպաստելու համար կիրառի նպատակահարմար կառավարման փորձառնություն և գործառնական ընթացակարգեր;
- b) Պահպանի և հավատարմագրման կազմակերպությանը ներկայացնի ԱՎԻ գործողությունների վերաբերյալ բոլոր անհրաժեշտ փոստաթղթերը, ուսումնական պլանը, զեկույցները, արձանագրությունները և այլ տվյալներ;
- c) Հավատարմագրման մարմինն ապահովել հասանելիություն դեպի բոլոր վայրեր, շինություններ, գործողություններ և այլ հարմարություններ, որոնք կարիք կա այցելելու որպես մանոիթորինգի պահանջների մի մաս:

ԱԳԱՄ-ի կամ իշխանությունների բացակայության պարագայում ԱՎԻ կազմակերպությունը պետք է լրացուցիչ պարտավորություններ ստանձնի: Դրանք բերված են ստորև, սակայն ցանկը սպառիչ չէ.

- a) Դոնոր կազմակերպության հետ համաձայնության գալ ԱՎԻ կազմակերպությունների և գործողությունների հավատարմագրման համակարգի վերաբերյալ՝ ՀԱԳՄՉ-երին համաձայն;
- b) ԱԳԱՄ-ի կազմավորման ընթացքում աջակցել տեղի բնակչությանը՝ կազմելով հավատարմագրման ազգային չափորոշիչները:

8.5. Դոնորներ

Դոնոր կազմակերպությունը, պայմանագրի կամ այլ պաշտոնական համաձայնագրի կազմումից հետո, պատասխանատու է դառնում հավատարմագրման ազգային պահանջների վերաբերյալ մանրամասների ընդգրկման համար: ԱԳԱՄ-ի բացակայության դեպքում դոնորը պետք է ընդգրկի ՄԱԿ-ի կամ այլ համապատասխան միջազգային կառույցի կողմից սահմանված պահանջները: Նման դեպքերում հավատարմագրման պահանջները հիմքում պետք է ունենան սույն ՀԱԳՄՉ-ը:

Դոնորները պետք է՝

- a) Հաստատեն չափորոշիչների անհրաժեշտությունը՝ դրանք ներառելով նախագծերի առանձնահատկությունների մեջ: Դա հատկապես կարևոր է դոնորներից գործոկությունների ֆինանսների ուղղակի բաշխման արտակարգ իրավիճակներում: Նման դեպքերում դոնոր կազմակերպությունը պետք է ապահովի, որ հավատարմագրման նվազագույն չափորոշիչներ հատկանշված լինեն նախագծի առաջարկի մեջ:

- b) Հաշվի առնեն հավատարմագրումը նախքան նախագծի համար գումարներ հատկացնելը:
- c) Հնարավորության դեպքում աջակցեն հավատարմագրման գործընթացին:

Հավելված Ա (Նորմատիվ) Փաստաթղթեր

Հետևյալ նորմատիվ փաստաթղթերը պարունակում են դրույթներ, որոնք այս տեքստի հղումների միջոցով կազմում են չափորոշիչի այս մասի դրույթները: Ամսաթվեր պարունակող հղումների դեպքում՝ այդ հրապարակումներում հետագայում կատարված փոփոխությունները կամ վերանայումները չեն կիրառվում: Սակայն չափորոշիչի այս մասի վրա հիմնված համաձայնագրերի կողմերին խրախուսվում է հնարավորություն գտնել՝ ստորև նշված նորմատիվ փաստաթղթերի առավել թարմ տարբերակները կիրառելու համար: Ամսաթիվ չպարունակող հղումների դեպքում կիրառվում է այդ նորմատիվ փաստաթղթի ամենավերջին տարբերակը: ISO-ի և IEC-ի անդամներն ունեն վավեր ISO կամ EN գրանցամատյան.

- ա) ՀԱԳՄՉ 01.10 ՀԱԳՄՉ կիրառման ուղեցույց;
- բ) ՀԱԳՄՉ 04.10 Ականազերծման գործողությունների տերմիններ, սահմանումներ և հապավումներ;
- գ) ՀԱԳՄՉ 07.11 Ականների վտանգի մասին իրազեկման կառավարման ուղեցույց;
- դ) ՀԱԳՄՉ 07.30 Ականազերծող կազմակերպությունների և գործողությունների հավաստարմագրում;
- ե) ՀԱԳՄՉ 07.41 Ականների վտանգի մասին իրազեկման ծրագրերի և նախագծերի մոնիտորինգ;
- զ) ՀԱԳՄՉ 14.20 Ականների վտանգի իրազեկման ծրագրերի և նախագծերի գնահատում:

Պետք է օգտագործվի թվարկված փաստաթղթերի վերջին տարբերակը/հրատարակությունը: Այս չափորոշիչում կիրառված բոլոր փաստաթղթերի պատճենները տեղակայված են ՀԱԳՄՉ-երի կայքէջում (տես www.mineactionstandards.org): ՀԱԳՄՉ չափորոշիչների, ուղեցույցների և փաստաթղթերի վերջին տարբերակների/հրատարակությունների գրանցամատյանը պահպանվում է ՄԱԺՄԿ-ում (Ժնևի Մարդասիրական ականազերծման միջազգային կենտրոն) և հասանելի է ՀԱԳՄՉ-երի կայքէջում (տես www.mineactionstandards.org): ԱԳԱՄ-ը, գործատուները և շահագրգիռ այլ մարմիններն ու կազմակերպությունները նախքան ականազերծման գործողությունների հանձնարարական ծրագրեր նախաձեռնելը պետք է ձեռք բերեն դրանց պատճենները:

Հավելված Բ (Տեղեկատվական) Տերմիններ, սահմանումներ և հասպտակումներ

B.1.

Առողիտ

Պարբերական գործընթաց կամ համակարգային ստուգում, որի նպատակն է հավաստիանալ, որ մասնագրերը համապատասխանում են փաստաթղթում նշված որակի չափորոշիչներին: Ստուգման նպատակն է հայտնաբերել փաստաթղթում նշված չափորոշիչների և կիրառված չափորոշիչների անհամապատասխանությունները: Այն կարող է նաև ցույց տալ, թե որքանով են փաստաթղթում նշված չափորոշիչներն օգնում կամ խոչընդոտում այդ պահին ընթացող գործընթացներին:

B.2.

Համայնքի հետ կապի ապահովում

Ականազերծման գործողություններում համայնքի հետ կապի ապահովում

Կապի ստեղծում ականներ/ՊՊՄ տարածքներ ունեցող համայնքների հետ, որի նպատակն է տեղեկություններ փոխանակել ականների/ՊՊՄ առկայության և ազդեցության վերաբերյալ, հաշվետվական կապ ստեղծել ականազերծման գործողությունների ծրագրի հետ և մշակել ռիսկի կրճատման ռազմավարություններ: Համայնքի հետ կապի նպատակն է երաշխավորել, որ ականազերծման գործողությունների ծրագիրը պլանավորելիս, իրականացնելիս և մոնիտորինգ իրականացնելիս համայնքի կարիքները և գերակայությունները առաջին տեղում լինեն:

Նշում՝ Համայնքի հետ կապը հիմնված է տեղեկությունների փոխանակման վրա և մասնակից է դարձնում համայնքներին որոշումների կայացման գործընթացին (ականազերծումից առաջ, դարձնապես և հետո)՝ ականազերծման գործողությունները ըստ գերակայությունների սահմանելու համար: Արդյունքում ականազերծման գործողությունների ծրագրերը լինում են ներառական, համայնքի կարիքներին միտված և ապահովում են համայնքի բոլոր հատվածների առավելագույն մասնակցությունը: Վերջինս ներառում է նախագծերի համատեղ պլանավորումը, իրականացումը, մոնիտորինգը և գնահատումը:

Նշում՝ Համայնքի հետ կապի նպատակներից մեկը անվտանգության միջանկյալ ռազմավարության համատեղ մշակումն է՝ խրախուսելու համար անհատական և համայնքային վարքագծի փոփոխությունը: Ռազմավարության նպատակն է կրճատել անհատների և համայնքի վրա ականների/ՊՊՄ ազդեցությունը մինչև վտանգը լիովին վերացվի:

B.3.

Ականազերծում

Մարդասիրական ականազերծում

Գործողություններ, որոնք նպաստում են ականների և ՊՊՄ-ների մաքրմանը՝ ներառելով տեխնիկական հետազոտում, քարտեզագրում, վնասազերծում, տեղանքի նշում, վնասազերծման վերաբերյալ փաստաթղթերի և վնասազերծված հողատարածքների հանձնում: Ականազերծումը կարող է տարբեր կազմակերպությունների կողմից իրականացվել, օրինակ՝ ՀԿ-ներ, կոմերցիոն ընկերություններ, ականազերծման գործողությունների համար ազգային թիմեր կամ զինվորական ստորաբաժանումներ: Ականազերծումը կարող է լինել արտակարգ իրավիճակային կամ զարգացման նկատառումներով:

Նշում՝ ՀԱԳՄՉ չափորոշիչներում և ուղեցույցներում ականների և ՊՊՄ-ների վնասազերծումը համարվում է ականազերծման գործընթացի ընդամենը մեկ մաս:

Նշում՝ ՀԱԳՄՉ չափորոշիչներում և ուղեցույցներում ականազերծումը համարվում է ականազերծման գործողությունների մի բաղադրիչ:

Նշում՝ ՀԱԳՄՉ չափորոշիչներում և ուղեցույցներում “ականագերծում” և “մարդասիրական
ականագերծում” տերմինները համարժեք են”:

B.4.

Պատերազմի պայթուցիկ մնացորդներ (ՊՊՄ)

Չպայթեցված զինամթերք (ՉՁ) և Լքված պայթուցիկ զինամթերք (ԼՊՁ): (ՍՈՁ
արձանագրություն V):

B.5.

Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչներ (ՀԱԳՄՉ)

Միջազգային համայնքի անունից ՄԱԿ-ի կողմից կազմված փաստաթղթեր, որոնց նպատակն
է բարձրացնել հակակականային գործունեության անվտանգությունը և
արդյունավետությունը՝ ուղեցույց տրամադրելու, սկզբունքներ սահմանելու և որոշ
դեպքերում, միջազգային պահանջներ և մասնագրեր սահմանելու միջոցով:

Նշում՝ ՀԱԳՄՉ-երը հանդես են գալիս որպես տեղեկատու փաստաթղթերի համակարգ, որը
հորդորում է և որոշ դեպքերում նաև պահանջում է, որ ականագերծման գործողությունների
ծրագրերի և նախագծերի դոնորներն ու ղեկավարներն ապահովեն և ցուցադրեն
արդյունավետության և անվտանգության համաձայնեցված մակարդակ:

Նշում՝ ՀԱԳՄՉ-երն ապահովում են մեկ միասնական/ընդհանուր լեզու, և առաջարկում են տվյալների
հավաքման, մշակման և վարման ձևաչափը և կանոնները, որոնք թույլ են տալիս ազատորեն
փոխանակել տեղեկությունները: Այս փոխանակումից շահում են այլ ծրագրեր և նախագծեր;
բացի այդ, տեղեկությունների փոխանակումն օգնում է կատարել ռեսուրսների հավաքագրում,
գերակայությունների սահմանում և կառավարում:

B.6.

Ական

Զինամթերք, որը նախատեսված է հողի կամ էլ որևէ այլ մակերեսի տակ, վրան կամ կողքին
տեղադրելու և մարդու կամ սարքավորման անմիջական ներկայության, մոտ հեռավորության
կամ շփման միջոցով պայթեցնելու համար [MBT]:

B.7.

Ականագերծման գործողություններ

Գործողություններ, որոնք նպատակ ունեն մեղմելու ականների և ՊՊՄ-ների սոցիալական,
տնտեսական և բնապահպանական ազդեցությունը:

Նշում՝ Ականագերծման գործողություններինը չի ենթադրում միայն ականագերծում: Այն
վերաբերում է նաև մարդկանց և հասարակությանը և ականների ու ՊՊՄ-ների աղտոտման
թողած ազդեցությանը: Համաականային գործունեության նպատակն է կրճատել ականների և
ՊՊՄ-ների վտանգը՝ այն հասցնելով այնպիսի աստիճանի, որը թույլ կտա, որ մարդիկ ապրեն
անվտանգ կյանքով, իսկ սոցիալական, տնտեսական և առողջապահական ոլորտները
կգարգանան առանց ականների և ՊՊՄ-ների աղտոտման արդյունքում ստեղծվող
խոչընդոտների, և տուժածների կարիքները կբավարարվեն: Ականագերծման
գործողություններինը պարունակում է գործողությունների հետևյալ հինգ փոխլրացնող
խմբերը.

- a) ԱՎԻ;
- b) Մարդասիրական ականագերծում, այսինքն՝ ականների և ՊՊՄ-ների հետազոտում,
քարտեզագրում, տեղանշում և մաքրում;
- c) աջակցություն տուժածներին, այդ թվում նաև առողջության վերականգնում և վերաինտեգրում;
- d) կուտակված պաշարների վնասագերծում
- e) քարոզչություն հակահետևակային ականների կիրառման դեմ

Նշում՝ Պահանջվում են մի շարք այլ օժանդակող գործողություններ նշյալ հակաակնային հինգ բաղադրիչների իրականացման համար, այդ թվում են՝ գնահատում և պլանավորում, ռեսուրսների հավաքագրում և առաջնահերթում, տեղեկությունների կառավարում, մարդկային հմտությունների զարգացում և ղեկավար անձնակազմի ուսուցում, որակի կառավարում և արդյունավետ, ճիշտ և անվտանգ սարքավորումների կիրառում:

B.8.

Ականների մասին իրազեկում

Ականների վտանգի իրազեկման (ԱՎԻ) մասն է հանդիսանում:

B.9.

Ականների վտանգի իրազեկում (ԱՎԻ)

Գործողություններ, որոնք նպատակ ունեն նվազեցնել ականների/ՊՊՄ-ների պայթեցման արդյունքում վնասվածքի վտանգը՝ մարդկանց իրազեկվածության աստիճանը բարձրացնելու և վարքագծային փոփոխություններ քարոզելու միջոցով, այդ թվում հանրային տեղեկությունների տարածումը, իրազեկումը և ուսուցումը, ինչպես նաև հակաակնային գործողություններում համայնքի հետ կապի ապահովումը:

B.10.

ԱՎԻ կազմակերպություն

Ցանկացած կազմակերպություն (պետական, հասարակական կամ քաղաքացիական հասարակության, ինչպես օրինակ կանանց միություն, երիտասարդական միություն, կարմիր խաչի և մահիկի միություններ), առևտրային հաստատություն և զինվորականներ (ներառյալ խաղաղապահ ուժերը), որոնք պատասխանատու են ԱՎԻ նախագծերի և առաջադրանքների իրականացման համար: ԱՎԻ կազմակերպությունը կարող է հիմնական կապալառու, ենթակապալառու, խորհրդատու կամ գործակալ լինել: ՏԱՎԻ ենթամիավոր՝ տերմինը վերաբերում է կազմակերպության այն ստորաբաժանմանը, անկախ անվանումից, որը հավատարմագրված է կատարելու նախատեսված մեկ կամ ավելի ԱՎԻ գործողություն, ինչպիսիք են հանրային իրազեկման նախագիծ, դպրոցական կրթական նախագծեր կամ ականազերծման գործողություններում համայնքի հետ կապի ապահովման նախագծի գնահատում:

B.11.

Ականազերծման գործողությունների անվտանգ կառույց (ԱԳԱՄ)

Ականապատ տարածքներ ունեցող բոլոր այն երկրների պետական գերատեսչություն(ներ)ը, կազմակերպություն(ներ)ը կամ հաստատություն(ներ)ը, որը(որոնք) պատասխանատու են ականազերծման գործողությունների անվտանգ կառավարման, կառավարման և համակարգման համար:

Նշում՝ Հիմնականում Ականազերծման գործողությունների անվտանգ (ՀԱԿ) կամ դրան համարժեք հաստատությունը հանդես է գալիս որպես ԱԳԱՄ կամ գործում է նրա անունից:

Նշում՝ Առանձին իրավիճակներում և պահերին ՄԱԿ-ը կամ որևէ այլ ճանաչված միջազգային կազմակերպություն կարող է անհրաժեշտ և տեղին համարել ստանձնելու ԱԳԱՄ-ի պարտականությունների մի մասը կամ ամբողջությամբ և իրականացնելու գործառնությունների մի մասը կամ ամբողջությամբ:

B.12.

Հանրային տեղեկությունների տարածում

Ականների կամ ՊՊՄ-ների մասին տեղեկություններ, որոնք օգտագործվում են ազգաբնակչության իրազեկելու կամ ունեցած տեղեկությունները թարմացնելու համար: Այն կարող է վերաբերել որոշակի հարցերի, օրինակ՝ ականների արգելման մասին օրենսդրության պահպանում, կամ կարող է օգտագործվել ականազերծման գործողությունների հանրության կողմից ցուցաբերած օժանդակությունն ուժեղացնելու համար: Այսպիսի նախագծերը, սովորաբար, պարունակում են ռիսկի կրճատման մասին ուղերձներ, սակայն կարող են օգտագործվել նաև ականազերծման գործողությունների ազգային քաղաքականությունն արտացոլելու համար:

B.13.

Չպայթած զինամթերք (ՉԶ)

Պայթուցիկ զինամթերք, որը լիցքավորվել է, ձուլվել/հազեցվել պայթացիչով, զինվել կամ որևէ այլ կերպ նախապատրաստվել օգտագործման համար կամ օգտագործվել: Այն կարող է լինել հրանետված, ցած գցված, տեղադրված կամ նախատեսված, սակայն դեռևս չպայթեցված՝ ձախողման պատճառով, շահագործման կառուցվածքից ելնելով կամ էլ որևէ այլ պատճառով:

B.14.

ՄԱԿ-ի Ականազերծման ծառայություն (ՄԱԿԱԾ)

ՄԱԿ-ի կազմում կարևոր մի հանգույց՝ ականների հետ կապված բոլոր գործողությունների համար:

Նշում՝ ՄԱԿԱԾ-ը ՄԱԿ-ի քարտուղարության կառուցվածքային միավոր է, որը պատասխանատու է միջազգային համայնքի կողմից կիրառելու նպատակով ՀԱԳՄՉ մշակման և պահպանման համար:

Նշում՝ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը ԱՎԲ-ի հիմնական մարմինն է և ենթակա է ՄԱԿԱԾ-ի ընդհանուր համակարգմանը:

Հավելված Գ (Տեղեկատվական) Հավատարմագրման կառավարման գործընթացը

Գործընթացի նկարագիր	Պարտավորություն		
	Ականազերծման կազմակերպություն	Հավաստագրման մարմին	Ականազերծման գործողություններ իսկ կառույց
Հանձնել ականազերծման ենթաբաժինների հավատարմագրման հայցադիմումները			
Հաստատել/ճանաչել հայցադիմումի ստացումը			
Հայցադիմումի հետ ներկայացված տեղեկությունների հիման վրա իրականացնել “վերացական” գնահատում			
Համապատասխանում են արդյոք հայցադիմումն ու հարակից տեղեկությունները հավատարմագրման պահանջներին			
Տեղեկացնել դիմողին, եթե հայցադիմումը մշակելու համար լրացուցիչ տեղեկությունների կարիք կա			
Դիմողը ներկայացնում է լրացուցիչ տեղեկություններ			
“Տեղային” այցելությունների և գնահատումների նախագիծ մշակել			
Իրականացնել “տեղային” գնահատումները			
Համապատասխանում է արդյոք ականազերծման կազմակերպությունը հավատարմագրման պահանջներին			
Խորհուրդ տալ դիմողին պահանջվող ուղղիչ գործողությունների վերաբերյալ			
Իրականացնել ուղղիչ գործողություններ՝ բավարարելու հավատարմագրման պահանջները			
Իրականացնել հավատարմագրման համար անհրաժեշտ գնահատումներ			
Համապատասխանում է արդյոք ականազերծման կազմակերպությունը հավատարմագրման պահանջներին			
Պատրաստել և ստորագրել հավատարմագրման համաձայնագիրը			
Կասեցնել հավատարմագրման հայցադիմումը			
Ականազերծման կազմակերպության և ենթաբաժինների մոնիտորինգն իրականացնել՝ ստուգելու հավատարմագրման համապատասխանեցումը			

Նշանների բացատրություն՝

փաստաթուղթ		գործընթաց		որոշում	
փաստաթուղթ (բազմակի)		բազմակի պարտավորություն		կապող օղակ	

Փոփոխությունների գրանցում

ՀԱԳՄՉ-երի փոփոխությունների կառավարում

ՀԱԳՄՉ-ի չափորոշիչների շարքը ենթակա է պաշտոնական վերանայման երեք տարին մեկ անգամ, սակայն սա չի բացառում այդ երեք տարիների ընթացքում փոփոխությունների կատարումը՝ ելնելով գործառնական անվտանգության և արդյունավետության կամ խմբագրական նկատառումներից:

Այս ՀԱԳՄՉ-ի փոփոխությունների կատարման դեպքում դրանք համարակալվում են, և այդ փոփոխությունների կատարման ամսաթիվն ու ընդհանուր մանրամասները նշվում են ստորև բերված աղյուսակում: Փոփոխությունները նաև պետք է նշվեն ՀԱԳՄՉ-ի առաջին էջում՝ թողարկման ամսաթվի տակ ներառելով «Ներառված են փոփոխություն թիվ 1 և այլն» արտահայտությունը:

Յուրաքանչյուր ՀԱԳՄՉ-ի պաշտոնական վերանայումից հետո կարող են թողարկվել նոր խմբագրությունները: Մինչև նոր հրատարակությունը կատարված փոփոխությունները կընդգրկվեն նոր հրատարակության մեջ, և փոփոխությունների աղյուսակը կմաքրվի: Դրանից հետո կրկին կսկսվի փոփոխությունների գրանցում՝ մինչև նոր վերանայման իրականացումը:

ՀԱԳՄՉ-ի ամենավերջին փոփոխություններն այն տարբերակներն են, որոնք տեղադրվում են ՀԱԳՄՉ-ի կայքէջում www.mineactionstandards.org:

Թիվ	Ամսաթիվ	Փոփոխության մանրամասներ
1	1 –ը դեկտեմբերի 2004թ.	1. Ֆորմատի փոփոխություններ: 2. Տեքստի խմբագրական չնչին փոփոխություններ: 3. Փոփոխություններ տերմիններում, սահանումներում և հապավումներում ըստ անհրաժեշտության՝ ապահովելու տվյալ ՀԱԳՄՉ-ի համապատասխանեցումը ՀԱԳՄՉ 04.10-ին: 4. Նշանակալից փոփոխություններ՝ a) Բաժին 5.2.2՝ նոր “1” ենթաբաժնի ընդգրկում: b) Բաժին 6.5՝ առաջին նախադասության տեքստային փոփոխություն: c) Բաժին 8.2՝ “d” ենթաբաժնի տեքստային փոփոխություն նոր “e” ենթաբաժնի ընդգրկում:
2	23-ը հուլիսի 2005թ.	1. Բաժին 4, երկրորդ պարբերություն, վերջին նախադասություն, հավատարմագրման տևողության վերաբերյալ լրացուցիչ բաժնի ընդգրկում: 2. Բաժին 5.2.2, երրորդ պարբերություն՝ գործառնական հավատարմագրման վերաբերյալ, “պետք է” փոփոխությունը “հարկավոր է” տարբերակի: 3. Բաժին 8.2, նոր երկրորդ պարբերության ընդգրկում, որը ԱԳԱՄ-ի պարտականություններից երկուսը, որոնք նախկինում նշված էին որպես “պետք է”, փոխում է “հարկավոր է” տարբերակի: 4. Բաժին 8.3՝ նոր “c” ենթաբաժնի ընդգրկում: 5. Հավելված Բ, “Ականների վտանգի իրազեկում (ԱՎԻ)” տերմինի փոփոխում՝ համահունչ դարձնելով այն ՀԱԳՄՉ 04.10-ին:
3	1-ն օգոստոսի 2006թ.	1. Չնչին փոփոխություններ/լրացումներ նախաբանի առաջին և երկրորդ պարբերություններում: 2. Բաժին 1, ծավալի ենթաբաժնում նոր երկրորդ պարբերության ընդգրկում: 3. “Ականներ և ՊՊՄ-ներ ” տերմինի ընդգրկում: 4. “Սպառնալիք” տերմինի հեռացում ՀԱԳՄՉ-երի ողջ շարքից: 5. Հավելված Գ-ի վերնագրում “անձնակազմ” բառի հեռացում և փոխարինում “կառավարում” բառով: